NAREGATSI ART INSTITUTE

YOUR CULTURE CONNECTION

EVENTS HELD IN NAREGATSI ART INSTITUTE IN OCTOBER, 2026

2026թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ ՆԱՐԵԿԱՑԻ ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

CULTURAL EXCHANGE / ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ



Literary-Musical Evening Dedicated to Swedish writer

https://naregatsi.org/s/v

Within the framework of the Cultural Exchange Program, the most famous short story by the prominent Swedish writer Stig Dagerman was presented in Armenian for the first time, accompanied by music of the French-Armenian Band Deleyaman.

Գրական-երաժշտական երեկո՝ նվիրված շվեդ գրողին

https://naregatsi.org/s/17

«Մշակութային երկխոսություն» ծրագրի շրջանակում առաջին անգամ հայերեն ներկայացվեց շվեդ ականավոր գրող Ստիգ Դագերմանի ամենահայտնի պատմվածքը՝ Ֆրանս-հայկական «Դելեյաման» խմբի երաժշտության ուղեկցությամբ:



Deleyaman Band Concert at NAI

https://naregatsi.org/s/w

French-Armenian Band Deleyaman had a solo concert. In attendance at the concert was Ambassador of France to the Republic of Armenia, Florian Escudié. At the end of the concert, Nareg Hartounian, founder of the Naregatsi Art Institute, bestowed the title of "Ambassador of Armenian Culture" upon Aret Madilian, the Band’s founder and arranger, gifting him an Armenian “khachkar”.

«Դելեյաման» խմբի համերգը ՆԱՄ-ում

https://naregatsi.org/s/16

Ֆրանս-հայկական «Դելեյաման» երաժշտական խումբը հանդես եկավ մենահամերգով: Համերգին ներկա էր ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպան Ֆլորիան էսկյուդիեն: Երեկոյի ավարտին ՆԱՄ հիմնադիր Նարեկ Հարությունյանը խմբի հիմնադիր, գործիքավորող Արետ Մադիլյանին շնորհեց հայ մշակույթի դեսպանի կոչում և նվիրեց հայկական խաչքար:



Nova Ensemble Performance at COP17 International Summit

https://naregatsi.org/s/11

The Nova Folk Instruments Ensemble performed at the Green Zone of the COP17 international environmental summit performing Armenian folk pieces, as well as music composed for films by Tigran Mansuryan.

«Նովա» նվագախմբի ելույթը COP17 միջազգային գագաթնաժողովում

https://naregatsi.org/s/18

«Նովա» ժողովրդական նվագարանների անսամբլը ելույթ ունեցավ Կենսաբանական բազմազանության COP17 միջազգային բնապահպանական գագաթնաժողովի Կանաչ գոտում՝ ներկայացնելով հայկական ժողովրդական ստեղծագործություններ և Տիգրան Մանսուրյանի ֆիլմերի երաժշտությունից:



The Nova Ensemble Concert at the Yerevak Educational Complex

https://www.naregatsi.org/s/15

The Nova Folk Instruments Ensemble had a concert at the Yerevak Educational Complex. During the interactive concert, the children were also introduced to the folk instruments.

«Նովա» անսամբլի համերգը կրթահամալիրում

https://www.naregatsi.org/s/14

ՆԱՄ «Նովա» ժողովրդական նվագարանների անսամբլը ելույթ ունեցավ «Երևակ» կրթահամալիրում: Ելույթներից բացի նվագախմբի անդամները երեխաներին պատմեցին ազգային նվագարանների մասին:

JUBILEE CONCERTS / ՀՈՒԲԵԼՅԱՆՆԵՐ



Jubilee Concert on the 80th anniversary of Vazganush Parmin

https://naregatsi.org/s/x

Naregatsi Art Institute hosted the jubilee concert dedicated to the 80th anniversary of qanun player, composer, and educator Vazganush Parmin. During the evening, young musicians performed the jubilee's compositions.

Վազգանուշ Պարմինի 80-ամյակի հոբելյանական համերգը

https://naregatsi.org/s/19

Հոբելյանական համերգով նշվեց քանոնահարուհի, կոմպոզիտոր և մանկավարժ Վազգանուշ Պարմինի 80-ամյակը: Երեկոյի ընթացքում երիտասարդ երաժիշտները կատարեցին հոբելյարի ստեղծագործությունները:



Jubilee Evening on the 70th Birthday Anniversary of Hakob Khalatyan

https://naregatsi.org/s/o

Naregatsi Art Institute marked the 70th birthday of renowned kamancha player Hakob Khalatyan. His paintings were also showcased during the evening.

Հակոբ Խալաթյանի 70-ամյակի հոբելյանական երեկոն

https://naregatsi.org/s/n

ՆԱՄ-ում նշվեց քամանչահար, մանկավարժ և գեղանկարիչ Հակոբ Խալաթյանի 70-ամյակը: Երեկոյի ընթացքում ներկայացված էին նաև նրա գեղանկարչական աշխատանքները:



Documentary Film Premiere

https://www.naregatsi.org/s/u

Naregatsi Art Institute hosted the premiere of the documentary film dedicated to the 120th anniversary of Artashes Arevshatyan, Honored Artist of the Armenian SSR.

Վավերագրական ֆիլմի պրեմիերա

https://www.naregatsi.org/s/13

Տեղի ունեցավ հայ բեմի մեծ վարպետ Արտաշես Արևշատյանի ծննդյան 120-ամյակին նվիրված վավերագրական ֆիլմի պրեմիերան:

EXHIBITIONS / ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ



Lecture and Exhibition "The Mural Paintings of Akhtala”

https://naregatsi.org/s/m

Reverend Father Hetum Tarverdyan presented the symbolism of the frescoes in the Holy Mother of God (Surb Astvatsatsin) Church in Akhtala. The NAI exhibition hall featured a photo series of the frescoes at the Akhtala Monastery captured by photographer Hrair Hawk Khatcherian.

Ախթալային նվիրված դասախոսություն-ցուցահանդես

https://naregatsi.org/s/l

Տեր Հեթում քահանա Թարվերդյանը ներկայացրեց Ախթալայի Ս. Աստվածածին եկեղեցու որմնանկարների խորհրդանիշները: ՆԱՄ ցուցասրահում ներկայացված էր լուսանկարիչ Հրայր Բազէ Խաչերեանի՝ Ախթալայի վանքի որմնանկարների ֆոտոշարքը:



Solo Exhibition "Woven Dreams"

https://www.naregatsi.org/s/j

Naregatsi Art Institute unveiled artist Alina Sahakyan’s solo exhibition of works, created using the dry felting technique. In the presented works woolen thread was transformed into artistic expression.

Անհատական ցուցահանդես. «Հյուսված երազներ»

https://www.naregatsi.org/s/k

Բացվեց Ալինա Սահակյանի՝ չոր թաղիքագործության տեխնիկայով աշխատանքների «Հյուսված երազներ» անհատական ցուցահանդեսը, որտեղ ներկայացված գործերում բրդյա թելը վերածվել էր գեղարվեստական խոսքի:



"HOMELAND BORDERS": Exhibition

https://naregatsi.org/s/1F

Naregatsi Art Institute hosted the exhibition entitled "Homeland Landscapes," featuring the works of young people living in Armenia's border communities.

The exhibition initiated by the company Art PR featured around 50 works created during the summer plein-air painting sessions.

ՀԱՅՐԵՆԻ ԵԶԵՐՔ. ցուցահանդես

https://naregatsi.org/s/1G

Art PR ընկերության նախաձեռնությամբ ՆԱՄ-ում բացվեց Հայաստանի սահմանամերձ համայնքների պատանիների աշխատանքների ցուցահանդեսը: Ներկայացվել էին ամառային պլեների ընթացքում ստեղծված 50 ջերմ ու հույսով լեցուն աշխատանքներ:

SPECIAL PROJECTS / ՀԱՏՈՒԿ ՆԱԽԱԳԾԵՐ



"National Dance: The Language of Inclusion" Socio-Cultural Event

https://www.naregatsi.org/s/h

The Naregatsi Art Institute hosted the concluding event of the "National Dance: A Language of Inclusion" program, an initiative by the NGO "Women for Life". The young people with autism and special needs performed Armenian national dances.

Սոցիալ-մշակութային ներառական միջոցառում ՆԱՄ-ում

https://www.naregatsi.org/s/i

«Կանայք հանուն կյանքի» ՀԿ-ն ամփոփեց «Ազգային պարը՝ ներառման լեզու» ծրագիրը, որի շրջանակում հատուկ կարիքներ ունեցող պատանիները ներկայացրին հայկական ազգային պարեր:



Presentation of Nana Voskanyan's Historical Novel

https://naregatsi.org/s/12

NAI hosted the presentation of the prose writer Nana Voskanyan's historical novel "Dispelling the Mist of Obscurity". It reflects on the political events of 13th-century Cilician Armenia and the cultural legacy left by the miniaturist Toros Roslin. The Nubar Traditional Song and Dance Ensemble performed.

Պատմավեպի շնորհանդես

https://naregatsi.org/s/1A

Տեղի ունեցավ արձակագիր Նանա Ոսկանյանի «Ցրելով անհայտության մշուշը» պատմավեպի շնորհանդեսը: Գիրքը պատմում է 13-րդ դարի Կիլիկյան Հայաստանի իրադարձություններին և մանրանկարիչ Թորոս Ռոսլինի մշակութային ժառանգությանը: Ելույթ ունեցավ «Նուբար» ավանդական երգի-պարի համույթը:



Lecture "In the World of Isahakyan's Manuscripts"

https://naregatsi.org/s/z

During the meeting organized ahead of Avetik Isahakyan’s birthday, Shogher Khachatryan presented unpublished materials preserved in the writer’s notebooks, diaries, and letters.

Բանախոսություն Իսահակյանի ձեռագրերի մասին

https://naregatsi.org/s/1B

Ավետիք Իսահակյանի ծննդյան օրվա առջիվ իսահակյանագետ Շողեր Խաչատրյանը ներկայացրեց մեծանուն բանաստեղծի ծոցատետրերում, օրագրերում ու նամակներում պահպանված անտիպ արխիվային նյութերը:

UPCOMING EVENTS IN NAREGATSI ART INSTITUTE IN NOVEMBER, 2026

2026Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻՆ ՆԱՐԵԿԱՑԻ ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

«ՁԵՌՔԵՐ» ՎԻԶՈՒԱԼ ԱՐՎԵՍՏԻ ԿԵՆՏՐՈՆԸ համագործակցելով
ՍՈՍ ԱՐԵՎԵԼՔԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ հետ
ներկայացնում են

ՆՈՅԵՄԲԵՐԻ 18:00 2026

ՆԱՐԵԿԱՑԻ ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

SOS Chrétiens d'Orient

TSERKER

ՄԵԿԱՄՅԱ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՏԵՍՈՂԱԿԱՆ
ՊԱՏՄԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՐԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ
ԽՄԲԱՅԻՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

ՄԵԾ ՊԱՏԿԵՐԸ

ՄԱՍ 1
ԱՌՕՐՅԱՅԻ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆԸ

ՏԵՍՈՂԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ՝ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՀԱՐԺԻՍ ԳՅՈՒՂԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

ԲԱՑՈՒՄԸ ԿՄԵԿՆԱՐԿԻ
ՏԻԳՐԱՆ ԿԱԶԱՉՅԱՆԻ
ԴԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ ԻՄՊՐՈՎԻԶԱՑԻԱՅՈՎ



Photography Exhibition
https://naregatsi.org/s/1H

Naregatsi Art Institute will unveil the photography exhibition. “Big Picture: The Beauty of Everyday Life”, which will feature photographic works by young people from the village of Harzhis, Syunik region, created in collaboration with the "Hands" Visual Arts Center and the "SOS Christians of the East" organization.

Լուսանկարչական ցուցահանդես
https://naregatsi.org/s/1C

ՆԱՄ-ում կբացվի «Մեծ պատկերը. առօրյայի գեղեցկությունը» լուսանկարչական ցուցահանդեսը, որտեղ կներկայացվեն Սյունիքի մարզի Հարժիս գյուղի երիտասարդների լուսանկարչական աշխատանքները՝ ստեղծված «Ձեռքեր» վիզուալ արվեստի կենտրոնի և «ՍՈՍ արևելքի քրիստոնյաներ» կազմակերպության հետ համագործակցությամբ:



"TALKING STONES: Mosaic Exhibition


https://naregatsi.org/s/1I

Naregatsi Art Institute will unveil the exhibition of original mosaics by Talin Mikroyan. The original mosaic works of Talin Mikroyan, a native of Aleppo, who has been creating in Armenia since 2025, offer a unique appreciation of Armenian cultural identity.

ԽՈՍՈՂ ՔԱՐԵՐ. խճանկարների ցուցահանդես

https://naregatsi.org/s/1D

ՆԱՄ-ում կբացվի Թալին Միկրոյանի խճանկարների «ԽՈՍՈՂ ՔԱՐԵՐ» ցուցահանդեսը: Ծնունդով Հալեպից, 2025 թվականից Հայաստանում ստեղծագործող Թալին Միկրոյանի հեղինակային խճանկարներն յուրովի արժևորում են հայկական մշակութային ինքնությունը:



16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 17:00 2026

Բայց մեր աշխարհն էլ էսպես չի մնա

Աշտարակի «Սուրբ Մարիանե»
և Սաղմոսավանի «Հայորդյաց տուն»
սոցիալ-կրթական կենտրոնների սաներ

ՆԱՐԵԿԱՑԻ
ԱՐՎԵՍՏԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ցուցահանդես

Exhibition "But Our World Will Not Stay Like This"

https://naregatsi.org/s/1J

Students from the Ashtarak social-educational centers (children from socially disadvantaged and displaced families from Artsakh) will present works of fine arts and crafts, perform theatrical performances, recite poems, sing, and dance.

«Բայց մեր աշխարհն էլ էսպես չի մնա» ցուցահանդես

https://naregatsi.org/s/1E

Աշտարակի սոցիալ-կրթական կենտրոնների սաները (սոցիալապես անապահով և Արցախից տեղահանված ընտանիքների երեխաներ) կներկայացնեն կերպարվեստի և ձեռարվեստի աշխատանքները, հանդես կգան թատերական ներկայացման, ասմունքի, երգի ու պարի կատարումներով:

YOU CAN FOLLOW US ON FACEBOOK AND INSTAGRAM TO SEE MORE.

ԱՎԵԼԻՆ ՏԵՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ ԵՔ ՀԵՏԵՎԵԼ ՄԵԶ
ՖԵՅՍԲՈՒՔՈՒՄ ԵՎ ԻՆՍՏԱԳՐԱՄՈՒՄ.

www.naregatsi.org

Join us in making a difference

DONATE

16/1 Vardanants,Yerevan, Armenia I (010) 58 01 05

Վարդանանց 16/1